

գոյն իմաստով, սակայն, երջանկապաշտութիւնը բարոյական բարձր արժէք ունեցող վարմունքին մէջ կը փնտռէ երջանկութիւնը:

- Եթէ մտածեմ, որ ամուսնալուծուելէ ետք, Նոր կողակիցս ինծի համար աւելի օգտակար ու շահաբեր պիտի դառնայ, վարմունքիս ելակետը՝ *օգտապաշտութիւն* (Utilitarianism) Է: Նպատակաբանական այս տեսութիւնը սակայն նկատի կ'առնէ միայն վարմունքի մը հետեւանքը եւ ոչ թէ Նոյնինքն վարմունքը, որպէս արարք կամ այդ վարմունքի հեղինակին նկարագիրը ու առաքինութիւնները...:
- Եթէ մտածեմ, որ չեմ կրնար ամուսնալուծուիլ, որովհետեւ կրօնական կամ այլ պատճառով արգիւտած է ամուսնալուծութիւնը, այն ատեն վարմունքիս ելակետը՝ *օրէնք* (պատուիրան) մըն է եւ ես կամայ թէ ակամայ կ'ենթարկուիմ այդ օրէնքին:
- Եթէ մտածեմ, որ իմ որոշումս պէտք է կայանայ միայն իմ բանականութենէն ելլելով ու ես (տեսակ մը) պարտաւորուած եմ իմ բանականութեան անսալու, այն ատեն վարմունքիս ելակետը եւ հիմնաւորումը՝ *պարտագիտական* (Deontology) Է: Գերման փիլիսոփայ **Ի. Կանտ** բարոյագիտական տեսութիւն մը հիմնած է այս գաղափարին վրայ՝ *պարտագիտական բարոյագիտութիւնը*, որ ինչպէս պիտի տեսնենք (Էջ 160), բարոյագիտական տեսութիւններու մէջ իր իւրայատուկ տեղը կը գրաւէ:



Փիլիսոփայական բարոյագիտութեան ոլորտին մէջ, գոյութիւն ունին, մարդկային բանականութեան սկզբունքին վրայ կառուցուած զանազան դպրոցներ, կողմնորոշումներ եւ տեսութիւններ, որոնց վրայ հարկ է ականարկ մը նետել:

Առաջին փորձը կատարուած է հնադարեան ժամանակներուն, երբ յոյն փիլիսոփայ **Արիստոտէլ** (յուն.՝ Aristotélês, 384 – 322 մ.թ.ա.) կը մշակէ բարոյագիտական տեսութեան սկզբունք մը, որ հիմնուած է առաքինութիւններու ու երջանկութեան վրայ: Այս իմաստով, կարելի է խօսիլ *առաքինութեան* եւ *երջանկապաշտական* (Eudaimonism) բարոյագիտութեան մը մասին:

Նետազային, Նոր Դարաշրջանին, անգլիացի փիլիսոփայ **Բենթամ** (Jeremy Bentham, 1748 – 1832 թ.), կը մշակէ բարոյագիտական Նոր տեսութիւն մը, որ հիմնուած է ընկերային կամ հաւաքական օգուտին վրայ: Այս իմաստով, կարելի է խօսիլ *օգտապաշտական* (Utilitarianism) բարոյագիտութեան մը մասին:

Գրեթէ միաժամանակ, գերման փիլիսոփայ **Կանտ** կը մշակէ բարոյագիտական այլ տեսութիւն մը, որ հիմնուած է ինքնօրինութեան (Autonomy, յուն.՝ „nomos“ = օրէնք) վրայ, ուր անհատական կամքը ինքնիրեն համար բարոյական պարտաւորեցնող կանոններ կը հաստատէ: Այս իմաստով, կարելի է խօսիլ *պարտագիտական* (Deontologia) բարոյագիտութեան մը մասին: